

Ընդունելության քննություն մաթեմատիկայից 6-ից 7-րդ դասարան 2015-2016 ուստարի

Մաղթում ենք հաջողություն

1	2	3	4	5	6	7	8	9	10	Ընդ.

- (0,2) a թվի հակադիրին ավելացնել b -ի հակադարձը, եթե $a = -15$, $b = -\frac{1}{8}$:
- (0,4) Դասավորել աճման կարգով՝ 25-ի 58%-ը, -69-ի $\frac{2}{3}$ մասի բացարձակ արժեքը (մոդուլը) և 60-ի 0,15 մասը:
- (0,3) 15 բանվորներ կատարել են աշխատանքը 24 օրում: Քանի՞ օրում այդ նույն աշխատանքը կկատարեին 18 բանվորներ:
- (0,3) Դետալի լայնությունը 2:5 մասշտաբով զծագրում 8 սմ է: Որքա՞ն կլինի այդ դետալի լայնությունը 3:4 մասշտաբով զծագրում:
- (0,4) Գտնել Գտնել $\frac{35}{54}$ և $\frac{49}{72}$ կոտորակների համարիչների ամենամեծ ընդհանուր բաժանարարը և հայտարարների ամենափոքր ընդհանուր բազմապատիկը:

6. (0,4) Կրճատել կոտորակը՝ $\frac{15 \cdot 16 - 10 \cdot 14}{10 \cdot 6 + 40 \cdot 3} =$

7. (0,5) Կատարել գործողությունները. $-10 - 3\frac{3}{4} \cdot \left(2\frac{1}{3} + 1,4\right) : 1\frac{5}{9}$

8. (0,4) Լուծել հավասարումը. $2 \cdot \left(\frac{1}{5}x + 1\right) - 3 = 4 - 0,5 \cdot (10x + 1)$

9. (0,5) Գնդակները պարկերի մեջ դասավորելիս նկատեցինք, որ եթե ամեն պարկի մեջ 28 գնդակ դնենք, 24 գնդակ կավելանա, իսկ եթե 32-ական գնդակ դնենք, 20 գնդակ կպակասի: Քանի՞ պարկի մեջ քանի՞ գնդակ պիտի տեղավորեինք:

10. (0,6) Հեծանվորդը և հետիոտնը միաժամանակ դուրս են եկել իրար հանդեպ երկու վայրերից, որոնց միջև հեռավորությունը 52 կմ է: Հանդիպելիս պարզվել է, որ հետիոտնի անցած ճանապարհը կազմում է հեծանվորդի անցած ճանապարհի $\frac{11}{15}$ -ը: Մինչև հետիոտնի հետ հանդիպելը քանի՞ ժամ է եղել ճանապարհին, եթե նրա արագությունը 1,6 կմ/ժ-ով ավելի էր հետիոտնի արագությունից: